ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 213-Ա

«24» դեկտեմբերի 2019 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ 26,08 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0,03262 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի «դ» ենթակետի, 48-րդ և 50-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 2-րդ մասի դրույթներով և հիմք Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի մարզի Ամասիա համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի 2-րդ փողոց, թիվ 13/5 հասցեի ավտոտնակի աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գին հաստատելու մասին» թիվ 62-Ա որոշումը և 2019 թվականի դեկտեմբերի 17-ին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանում կայացած աճուրդ վաճառքի արդյունքների վերաբերյալ հազմված աճուրդային հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 2 արձանագրությունը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում տեղակայված համայնքային սեփականությունը հանդիսացող 08-010-0073-0006 կադաստրային ծածկագրով, 26,08 քառակուսի մետր անշարժ գույքի նոր հասցեավորումը սահմանել հետևյալ կերպ՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ամասիա համայնք, Ամասիա բնակավայր, 26-րդ փողոց, թիվ 13/5:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականությունը համարվող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի, Ամասիա բնակավայրի, 26-րդ

փողոցի, թիվ 13/5 հասցեի 26,08 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N27082019-08-0013) և նրա կառուցապատման և սպասարկման համար զբաղեցրած 08-010-0073-0006 կադաստրային ծածկագրով **0,003262** հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը **149600** (հարյուր քառասունինը հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից՝ Մանուել Արամազդի Միրզոյանին (անձնագիր՝ AK 0617251, տրված՝ 15.09.2010 թվականին, 005-ի կողմից) և կնքել առուվաճառքի պայմանագիր:

3. Պարտավորեցնել գնորդին՝

սահմանված ժամկետում վճարել գնված անշարժ գույքի արժեքը և գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

«24» դեկտեմբերի 2019 թվական
գյուղ Ամասիա